ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

<<10>> <<սեպտեմբեր>> 2015թ
ք. Եղեգնաձոր

N.. 173

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՐԵԳ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի <<դ>> կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետի (69-3.3-6) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 9-ի եզրակացությունը և Արեգ Մարտիրոսյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Արեգ Մարտիրոսյանին 2015 թվականի սեպտեմբերի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետի (69-3.3-6) պաշտոնում:
2. Հաշվապահին՝ աշխատավարձը վճարել «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Կ.ՍԱՀԱԿՅԱՆ